

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

«Գործարար Շահերի Պաշտպանության Ցանցի»

Նպատակը և առաքելությունը

«Գործարար Շահերի Պաշտպանության Ցանցը» (այսուհետ՝ Ցանց) կազմակերպությունների և անհատների ոչ պաշտոնական միավորում է, որի նպատակն է միացյալ ուժերով նպաստել Հայաստանում սոցիալ-տնտեսական բարեփոխումների իրականացմանը և մասնավոր ձեռնարկատիրության զարգացմանը, ապահովելով գործարար հանրության և քաղաքացիական հասարակության ներգրավվածությունն ու մասնակցությունը հանրային քաղաքականության մշակման, իրականացման, վերահսկման և գնահատման գործընթացներում:

Խնդիրները

- Համակարգել Ցանցի անդամների գործունեությունը ի նպաստ երկրում սոցիալ-տնտեսական բարեփոխումների իրականացման, ՓՄՁ ոլորտի զարգացման և գործարար միջավայրի բարելավման:
- Ապահովել փոխադարձ կապ Ցանցի անդամների և շահագրգիռ այլ հասարակական կառույցների, պետական և մասնավոր ոլորտի ներկայացուցիչների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների միջև:
- Մասնակցել մասնավոր ձեռնարկատիրության և մասնավորապես ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված հանրային ծրագրերի մշակման և իրականացման գործընթացին՝ ներկայացնելով Ցանցի անդամների միասնական տեսակետը և դիրքորոշումը:
- Ձեռնամուխ լինել Ցանցի անդամների կողմից առաջ քաշված կարևոր հիմնախնդիրների ներկայացմանը և քննարկմանը զանազան ատյաններում և համապատասխան լուծումների հետապնդմանը:
- Նպաստել ՓՄՁ շահերի պաշտպանությանը, ՓՄՁ սուբյեկտների զարգացման կարողությունների և ունակությունների բացահայտմանն ու իրացմանը, ինչպես նաև տնտեսական մրցակցության հավասար հնարավորությունների և պայմանների ձևավորմանն ու զարգացմանը:
- Նպաստել գործարար հանրության և քաղաքացիական հասարակության իրազեկության բարձրացմանը հանրային քաղաքականությունների մշակման և օրենսդրական բարեփոխումների իրականացման վերաբերյալ:
- Նպաստել Ցանցի անդամների մասնակցությանը տարբեր տեսակի տեղական, տարածաշրջանային և միջազգային միջոցառումներին:

Գործունեության ուղղությունները

Ցանցի գործունեության հիմնական ուղղություններն են սոցիալ-տնտեսական և մասնավոր ձեռնարկատիրության, հատկապես ՓՄՁ ոլորտներին առնչվող.

- զարգացման ծրագրերի մշակում և իրականացում,
- հանրային քաղաքականությունների, ծրագրերի և օրենսդրական նախաձեռնությունների վերաբերյալ փորձագիտական վերլուծությունների, ուսումնասիրությունների իրականացում և համապատասխան նյութերի հրատարակում,
- հանրային քաղաքականությունների և ծրագրերի իրականացման վերահսկում և գնահատում,
- առկա հիմնախնդիրների և հրատապ հարցերի վերաբերյալ քննարկումների, սեմինարների և այլ միջոցառումների կազմակերպում և իրականացում,
- շահերի պաշտպանությանն ուղղված քարոզարշավների և այլ միջոցառումների կազմակերպում և իրականացում,
- կառավարական, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ոչ կառավարական և միջազգային կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների հետ համագործակցության նախաձեռնում և իրականացում,
- Ցանցի նպատակների և խնդիրների իրականացմանն ուղղված ցանկացած այլ գործունեություն, որը չի հակասում ՀՀ օրենսդրությանը:

Գործունեության սկզբունքները

Ցանցի գործունեության հիմնական սկզբունքներն են.

- անդամների հավասարությունը,
- համերաշխությունը,
- թափանցիկությունը,
- փոխհամաձայնությունը,
- քաղաքական չեզոքությունը
- արդյունավետությունը:

Իրավական կարգավիճակը

Ցանցը իր գործունեությունն իրականացնում է առանց պաշտոնական գրանցման ինչպես Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Յանցի կառուցվածքը և կառավարումը

Յանցի գործունեության կառավարման գերագույն մարմինն է Յանցի անդամների ընդհանուր ժողովը /այսուհետև՝ Ժողով/:

Ժողովի քվորումը ապահովվում է անդամների պարզ մեծամասնության մասնակցության դեպքում:

Ժողովի որոշումները ընդունվում են փոխհամաձայնության (կոնսենսուսի) սկզբունքի հիման վրա, իսկ դրա անհնարինության դեպքում ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ:

Ժողովը.

- որոշումներ է կայացնում Յանցի ռազմավարական և մարտավարական հիմնահարցերի վերաբերյալ,
- հաստատում է նոր անդամների անդամակցությունը
- որոշում է կայացնում անդամի անդամակցության դադարեցման վերաբերյալ
- սահմանում է ընդհանուր ժողովների անցկացման կարգը և ժամկետները,
- ընտրում է Յանցի Քարտուղարություն /այսուհետև՝ Քարտուղարություն/, որը հանդիսանում է Յանցի գործունեությունը համակարգող գործադիր մարմինը,
- հաստատում է Յանցի տարեկան հաշվետվությունները իրականացված գործունեության վերաբերյալ:

Արտահերթ ժողովներ կարող են հրավիրվել ըստ անհրաժեշտության՝ Քարտուղարության կամ անդամների 1/3-ի նախաձեռնությամբ:

Քարտուղարությունը

Քարտուղարությունը հանդիսանում է Յանցի գործունեության համակարգող գործադիր մարմինը:

Քարտուղարությունը բաղկացած է մինչև 7 անդամից և ընտրվում է Ժողովի կողմից 2 տարի ժամկետով:

Քարտուղարությունը

- համակարգում է Յանցի աշխատանքները և ընթացիկ գործունեությունը,
- իրականացնում է Ժողովի կողմից ընդունված որոշումները,
- կազմակերպում է Յանցի հերթական և արտահերթ ժողովները,
- հաշվետվություններ է ներկայացնում ժողովին Յանցի գործունեության վերաբերյալ,
- ընդունում և հաստատում է նոր անդամների անդամակցության վերաբերյալ դիմումները և տեղեկացնում է Ժողովին այդ մասին,
- տեղեկացնում է Ժողովին անդամների Յանցից դուրս գալու մասին և ներկայացնում է առաջարկներ համապատասխան հիմնավորմամբ անդամակցության դադարեցման վերաբերյալ,
- կազմակերպում և ապահովում է ընթացիկ տեղեկատվության տրամադրումը Յանցի անդամներին,

- կազմակերպում և ապահովում է անհրաժեշտ հաղորդակցություն Յանցի անդամների միջև,
- Յանցի գործունեության շրջանակներում կազմակերպում է աշխատանքային հանդիպումներ և քննարկումներ, սեմինարներ, կոնֆերասներ և այլ միջոցառումներ:

Անդամակցությունը և անդամակցության դադարեցումը

Յանցին կարող է անդամակցել ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որն ընդունում է Յանցի գործունեության սույն Կանոնակարգում արտահայտված նպատակները, խնդիրներն ու գործունեության սկզբունքները և դա հաստատում է Յանցի Հուշագրում իր ստորագրությամբ:

Յանցի ցանկացած անդամ կարող է դուրս գալ Յանցից իր նախաձեռնությամբ առանց որևէ խոչընդոտի, նախապես գրավոր տեղեկացնելով Յանցի Քարտուղարությանը այդ մասին:

Յանցին անդամակցությունը կարող է դադարեցվել միայն Ժողովի որոշմամբ, անդամի կողմից Յանցի գործունեության նպատակներից և սկզբունքներից շեղվելու, ինչպես նաև առանց Ժողովի կամ Քարտուղարության հետ համաձայնեցնելու՝ Յանցի անունից իրականացվող ինքնագործունեության դեպքում, որը կարող է հանգեցնել Յանցի և նրա անդամների հեղինակազրկմանը և վարկաբեկմանը:

Անդամների իրավունքներն ու պատասխանատվությունը

Յանցի անդամները իրավունք ունեն.

- մասնակցել Յանցի Ժողովներին և որոշումների կայացմանը,
- մասնակցել Յանցի կողմից նախաձեռնվող կամ իրականացվող միջոցառումներին,
- հանդես գալ նախաձեռնությամբ կամ առաջարկով,
- կարծիք կամ դիրքորոշում արտահայտել քննարկվող հարցերի վերաբերյալ,
- ստանալ անհարժեշտ տեղեկատվություն Յանցի գործունեության վերաբերյալ,
- դուրս գալ Յանցից այդ մասին գրավոր նախապես տեղեկացնելով Քարտուղարությանը,
- օգտվել Ժողովի որոշմամբ ընձեռնված այլ իրավունքներից:

Յանցի անդամները պարտավորվում են.

- կանոնավոր կերպով մասնակցել Յանցի գործունեությանը, Ժողովներին և Յանցի կողմից կազմակերպվող այլ միջոցառումներին (քննարկումներ, սեմինարներ, քարոզարշավներ, կոնֆերանսներ և այլն),
- աջակցել Յանցի անդամների գործունեությանը,
- հաշվետու և թափանցիկ լինել իրենց անդամների, գործընկերների և շահառուների առջև՝ Յանցի կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ: